ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Բազում համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Բազում	Ավագանու հերթական նիստ	26.10.2021	10:30	Բազումի համայնքապետարանի նիստերի դահլիճ (գ.Բազում, 1 փ. թիվ 2)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021 թ հոկտեմբերի 26-ին՝ ժամը 10.30-ին Բազումի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 10.30

1.Բազում համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Համայնքի նակիչներին դրամական օգնություն ցուցաբերելու մասին

3. 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը մշտական անհատույց օգտագործման տրամադրելու մասին

5. Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու թույլտվություն տալու մասին

6. Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու թույլտվություն տալու մասին

ՆԱԽԱԳԻԾ 49-Ա

ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 9
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 09 նիստի օրակարգը.

1.Բազում համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Համայնքի նակիչներին դրամական օգնություն ցուցաբերելու մասին

3. 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը մշտական անհատույց օգտագործման տրամադրելու մասին

5. Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու թույլտվություն տալու մասին

6. Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու թույլտվություն տալու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 50-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով , համայնքի ավագանու 2014 թ-ի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ Բազում համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 31-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ------

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱՁՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< >>---------2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ------ ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱՁՈՒՄ ՀՍՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Երիբեկյան Սոնյա Գագիկի - 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ
2. Հովհաննիսյան Վարսենկ Մկրտչի - 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ
3. Ալավերդյան Լիլիթ Միխակի - 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՊԼՈՒԶՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 51-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ
ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Բազում համայնքի 2021 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի հաղորդումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 52-Ա

ՀԱՄԱՅՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՌՈՂ ԳՈՒՅՔԸ ՄՇՏԱԿԱՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է .

Բազում համայնքի 1 փողոց 2/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0020-0014 ծածկագրի 0,05171 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 133,54 քմ մակերեսով հասարակական շինությունը մշտական անհատույց օգտագործման տրամադրել <<ՀՀ Լոռու մարզի Բազումի մանկապարտեզ>> ՀՈԱԿ -ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 53-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, պետական սեփականություն հանդիսացող հողերից Բազում համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08.04.2004թ-ի թիվ 458-Ն որոշումով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 14-րդ, 18-րդ, 57-րդ և 59 հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով ՏԻՄ ՀՀ օրենքի 42 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հնդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.04.2001թ-ի 286 որոշումով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 18,08,2021թ-ի հաստատված թիվ 01/111,3/06734-2021 համաձայնությունը հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ, հաստատված հողամասի հատակագիծը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի դրույթները և Լոռու մարզպետի 18,08,2021թ-ի հաստատված թիվ 01/111,3/06734-2021 համաձայնությունը հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ և հաստատված հողամասի հատակագիծը Բազում համայնքում գտնվող 06-023-0070-0001 ծածկագրի 0,04952 հա բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամասի նշանակությունը փոխել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի:
2. Գործառնական նշանակությունը փոփոխված 0,04952 հա հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 54-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, պետական սեփականություն հանդիսացող հողերից Բազում համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08.04.2004թ-ի թիվ 458-Ն որոշումով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 14-րդ, 18-րդ, 57-րդ և 59 հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով ՏԻՄ ՀՀ օրենքի 42 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հնդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.04.2001թ-ի 286 որոշումով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 18,08,2021թ-ի հաստատված թիվ 01/111,3/06739-2021 համաձայնությունը հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ, հաստատված հողամասի հատակագիծը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի դրույթները և Լոռու մարզպետի 18,08,2021թ-ի հաստատված թիվ 01/111,3/06739-2021 համաձայնությունը հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ և հաստատված հողամասի հատակագիծը Բազում համայնքում գտնվող 06-023-0060-00015 ծածկագրի 0,10958 հա բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամասի նշանակությունը փոխել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասի:
2. Գործառնական նշանակությունը փոփոխված 0,10958 հա հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ